ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԲՏԱՆ-ՄԱԾՁԲ-2025/13

ք. Երևան «22» ապրիլի 2025թ.

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունն, ի դեմս գլխավոր քարտուղար Դ.Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ստարտափ Արմենիա Գիտակրթական Հիմնադրամը» , ի դեմս տնօրեն Արսեն Հարությունյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է միջոցառումների հետ կապված ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:[1]

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.[2]

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 200,000,000 (Երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ 200,000,000 (երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[3] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

[3] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[4]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	«Ստարտափ Արմենիա Գիտակրթակա»ն Հիմնադրամ
Ք. Երևան, Վ. Սարգսյան 3/3	Ք. Երևան 0051, Արաբկիր 21, 10շ., բն. 8
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 2050022543291003
Հ/Հ 900011039444	ՀՎՀՀ 00152409
ՀՎՀՀ 02565518	**Տնօրեն՝**
Գլխավոր քարտուղար՝	**Ա. Հարությունյան**
Դ.Գասպարյան	
----------	----------
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«22» ապրիլի 2025թ. կնքված
ԲՏԱՆ-ՄԱԾՁԲ-2025/13 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	79951100/5	Տեխնիկական բնութագիրը կցվում է*	դրամ	200,000,000	1	Գեղարքունիքի Մարզ, Վարդենիս խոշորացված համայնք, գյուղ Դարանակ հողամաս 3	20.07.2025թ-26.07.2025թ.

*ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ծառայությունների							
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ամբողջական անվանումը	Տեխնիկական բնութագիրը	քանակը	Չափման միավորը	Միավորի գինը	Ընդհանուր գինը
1		Հիմնական անցակետ	Հիմնական անցակետը իրենից ներկայացնում է առնվազն 150 քառ.մ մակերեսով վրանային կոնստրուկցիա/շինություն: Այն կահավորված պետք է լինի մուտքի և ելքի ավտոմատացման անցակետերով ու սքանավորման սարքերով: Պետք է ունենա սպասասրահ, ինֆորմացիոն կետ: Անցակետը պետք է գործի 24 ժամ և հանդիսանա միջոցառման տարածք մուտք գործելու միակ ճանապարհը (բացառությամբ թիկունքային և ֆորս-մաժորային ելքերի):	1	դրամ	3.000.000	3.000.000
2		Ավտոկայանատեղի	Ավտոկայանատեղին պետք է լինի միջոցառման հիմնական անցակետին մոտ գտնվող 1 հա հարթեցված և բազային	1	դրամ	1.500.000	1.500.000

			վրա՝ նախատեսված մինչև 500 մեքենայի կայանման համար:				
3		Հիմնական մեծ փակ լսարան անհրաժեշտ կահավորմամբ	Հիմնական մեծ փակ լսարանը պետք է լինի առնվազն 200 քառ.մ մակերեսով վրանային կոնստրուկցիա/շինություն, որը նախատեսված է միջոցառման կրթական ծրագրի մեծ միջոցառումների՝ պանելային քննարկումների, հիմնական մրցույթների և այլ սեսիաների համար: Լսարանը պետք է կահավորված լինի առնվազն 500 աթոռներով, բեմահարթակով՝ առնվազն 20 քառ.մ, լեդ էկրաններով՝ առնվազն 10 քառ.մ, ձայնային և լուսային տեխնիկայով: Վատ եղանակային պայմանների դեպքում միջոցառման բացման և փակման արարողությունները նույնպես կարող են տեղափոխվել այդ լսարան:	1	դրամ	6.000.000	6.000.000
4		3 փոքր փակ լսարաններ անհրաժեշտ կահավորմամբ	3 փոքր փակ լսարաններ, որոնք պետք է լինեն յուրաքանչյուրն առնվազն 100 քառ.մ մակերեսով վրանային կոնստրուկցիա/շինություններ, որոնք նախատեսված են միջոցառման օրակարգով նախատեսված կրթական և այլ ծրագրերի անցկացման համար: Լսարանները պետք է կահավորված լինեն առնվազն 100 աթոռներով, բեմահարթակով, էկրանով՝ առնվազն 42 դույմ, անհրաժեշտ ձայնային և լուսային տեխնիկայով:	3	դրամ	1.650.000	4.950.000
5		4 բացօթյա լսարաններ անհրաժեշտ կահավորմամբ	4 բացօթյա լսարանները պետք է լինեն միջոցառման տարածքում որևէ համապարփակ ծառածածկ տարածք ընդգրկող հատվածում, յուրաքանչյուրն առնվազն 150 քառ.մ, որոնք պետք է կահավորված են լինեն անհրաժեշտ գույքով, 100 աթոռներով, սեղաններով, բեմով և էկրաններով՝ առնվազն 42 դույմ:	4	դրամ	750.000	3.000.000
6		Հիմնական աշխատանքային (Co-working) սրահ	Հիմնական աշխատանքային Co-working սրահը պետք է լինի առնվազն 100 քառ.մ վրանային կոնստրուկցիա/շինություն՝ կահավորված լոֆթային գույքով (առնվազն 15 սեղան, 45 աթոռ, 10 պարկաթոռ): Այն միջոցառման մասնակիցների համար ծառայելու է որպես աշխատանքային տարածք: Co-working-ը պետք է ունենա գերարագ wi-fi ինտերնետ կապ, մշտական հաստատուն հոսանք, հովացման համակարգեր և գործի 24 ժամ:	1	դրամ	3.550.000	3.550.000
		Հիմնական մեծ	Հիմնական մեծ բեմը պետք է լինի	1	դրամ	15.000.000	15.000.000

			քառ.մ, բարձրակարգ ձայնային և լուսային տեխնիկայով: Պետք է ծառայի միջոցառման բացման, փակման և այլ ֆորմալ իրադարձությունների համար: Բեմը պետք է ունենա 18 մետր ճակատ և 6 մետր խորություն: Միջոցառման ընթացում կարող են կազմակերպվել նաև մի քանի խոշոր համերգներ:				
8		Երկրորդային փոքր բեմ	Երկրորդային փոքր բեմը պետք է տեղադրվի միջոցառման անցկացման տարածքի ափամերձ հատվածում և հիմնականում ծառայի ժամանցային ծրագրերի համար: Այն պետք է ունենա 5 մետր ճակատ և 3 մետր խորություն՝ ապահովված ձայնային և լուսային համակարգերով:	1	դրամ	5.000.000	5.000.000
9		Բազմաֆունկցիոնալ սննդի կետ (Food Court)	Բազմաֆունկցիոնալ Food Court-ը պետք է լինի առնվազն 600 քառ.մ վրանային կոնստրուկցիա/շինություն, որը նախատեսված է միջոցառման հիմնական մասնակիցներին, հյուրերին և այցելուներին սննդային ծառայություններ մատուցելու համար: Այն պետք է բաղկացած լինի սպասարկման տարածքից նվազագույնը 100 սեղան և 400 աթոռ:	1	դրամ	9.000.000	9.000.000
10		Բացօթյա ցուցահանդես Expo	Բացօթյա ցուցահանդեսը (Expo) միջոցառման համակազմակերպիչների, գործընկեր կազմակերպությունների և հովանավորների համար նախատեսված հատված է, որտեղ վերոնշյալ կազմակերպությունները հնարավորություն են ունենալու ծավալել տաղավարներ և ներկայացնել իրենց նախագծերը և պրոդուկտները: Այս հատվածը պետք է զբաղեցնի մոտ 1000 քառ.մ տարածք ծածկված կոնստրուկցիոն ոչ հիմնական շինություններով:	1	դրամ	4.000.000	4.000.000
11		Վրանային ավան հիմնական մասնակիցների համար	Վրանային ավանը միջոցառման բոլոր հիմնական մասնակիցների գիշերելու համար նախատեսված հատված է, որտեղ պետք է տեղադրվեն 600 երկշերտ երկտեղանոց կամ երեքտեղանոց վրաններ: Վրաններն իրենց հերթին պետք է պարունակեն 1200 հատ քնապարկեր և 600 հատ ներքնակներ գիշերելու համար:	1	դրամ	20.000.000	20.000.000
12		Հյուրատուն-ավան բարձրակարգ հյուրերի և	Հյուրատուն-ավանում տեղակայված վրաններում պետք է լինեն անկողիններ, անկողնային պարագաներ, պահարաններ, սանհանգույցներ և հովացման	1	դրամ	10.000.000	10.000.000

		բանախոսների համար	նախատեսված բարձրակարգ հյուրերի և հրավիրված բանախոսների համար:				
13		Զուգարաններ	Առանձնացված տարածքում պետք է տեղակայվեն տղամարդկանց և կանանց համար առանձնացված զուգարաններ և լվացարաններ բոլոր սանիտարական նորմերի պահպանմամբ 48 խցիկ:	1	դրամ	12.000.000	12.000.000
14		Բաղնիքներ	Առանձնացված տարածքում պետք է տեղակայվեն տղամարդկանց և կանանց համար առանձնացված լոգախցիկներ բոլոր սանիտարական նորմերի պահպանմամբ 32 խցիկ:	1	դրամ	8.000.000	8.000.000
15		Սննդային պահեստ անհրաժեշտ գույքով	Սննդի պահեստը պետք է ծառայի մթերքի պատշաճ պահպանման և մատակարարման համար: Սննդի պահեստը իրենից ենթադրում է փակ վրանային կոնստրուկցիա՝ մեծ սառնարանով և առանձնացված բաժիններով 50 քառ.մ:	1	դրամ	3.000.000	3.000.000
16		Նյութատեխնիկական պահեստ	Նյութատեխնիկական պահեստը իրենից ներկայացնում է կոնտեյներների հիմքով պատրաստված հակահրդեհային և անվտանգության կանոններին համապատասխան փակ տարածք, որտեղ պետք է պահեստավորվեն միջոցառման տարբեր ենթակառուցվածքների մաս կազմող, այդ ենթակառուցվածներին և տարբեր ծառայություններին անհրաժեշտ ողջ նյութատեխնիկական միջոցները 150 քառ.մ.:	1	դրամ	5.000.000	5.000.000
17		Սպորտային անկյուն	Սպորտային անկյունը միջոցառման անցկացման տարածքում (ափամերձ հատվածում) սպորտային պարագաներով, զուգափայտերով և տուռնիկներով կահավորված հատված է, որտեղ միջոցառման մասնակիցները պետք է կարողանան մարզվել:	1	դրամ	1.000.000	1.000.000
18		Ֆուտբոլի փոքր դաշտ	Ֆուտբոլի փոքր դաշտը միջոցառման անցկացման տարածքում ֆուտբոլային պարագաներով կահավորված հատված է, որտեղ միջոցառման մասնակիցները կարողանան խաղալ ֆուտբոլ:	1	դրամ	500.000	500.000
19		Ծովափնյա վոլեյբոլի դաշտ	Ծովափնյա վոլեյբոլի դաշտը պետք է լինի միջոցառման անցկացման տարածքում վոլեյբոլային ցանցով կահավորված հատված:	1	դրամ	500.000	500.000
20		Միջոցառման ողջ տարածքում	Միջոցառման տարածքում անհրաժեշտ էլեկտրաէներգիայի ապահովման նպատակով համապատասխան	1	դրամ	3.000.000	3.000.000

		Էլեկտարաէներ գիայի ապահովում	որոնք միջոցառման անցկացման ողջ ընդգրկուն տարածքը պետք է ապահովեն էլեկտրականությամբ:				3.000.000
21		Պահնորդական ծառայություն	Միջոցառման անցկացման օրերին ամբողջ տարածքի անվտանգության կազմակերպում՝ 2 հսկիչ անցագրային կետերով (շուրջօրյա ծառայությամբ): Դրանից զատ միջոցառման անցկացման ողջ տարածքում շուրջօրյա ռեժիմով անվտանգության 20 աշխատակիցների ապահովում:	1	դրամ	5.000.000	5.000.000
22		Մաքրման ծառայություն	Մաքրման ծառայությունը պետք է ապահովի միջոցառման անցկացման ընդհանուր օգտագործման տարածքների մաքրությունը (անցակետեր, լսարաններ, Food Court, զուգարաններ, բաղնիքներ): Առնվազն 30 հոգուց բաղկացած անձնակազմ:	1	դրամ	8.000.000	8.000.000
23		Միջոցառման անցկացման տարածքում wi-fi ծածկույթի ապահովում	Միջոցառման անցկացման տարածքում գրեթե բոլոր ֆունկցիոնալ ենթակառուցվածքները պետք է ապահովված լինեն wi-fi ծածկույթով, ծածկույթը պետք է ընգրկի շուրջ 10 հա տարածք: 50մ/բ	1	դրամ	5.000.000	5.000.000
24		Հիմնական մասնակիցներին (1200 հոգի) օրվա մեջ անհրաժեշտ սննդամթերքի ապահովում	Միջոցառման ընթացում հիմնական մասնակիցները պետք է ապահովվեն սննդամթերքով՝ սնունդ պատրաստելու և համատեղ սնվելու հնարավորությամբ (Թարմ կաթնամթերք, երշիկեղեն, ձու, միրգ, բանջարեղեն, կրուպեղեն, տարբեր տեսակի ջեմեր, պահածոյացված սննդամթերք):	1	դրամ	12.000.000	12.000.000
25		Մուտքի-ելքի ընթացակարգը ապահովող ծառայություն	Միջոցառման ացկացման տարածքում տեղակայված հիմնական անցակետում յտեղադրված սարքավորումները պետք է կառավարվեն հատուկ ծրագրով, որի միջոցով վերահսկվի միջոցառման բոլոր մասնակիցների շարժերը՝ մուտքերը և ելքերը: Ավտոմատացված կերպով տպվեն նաև մասնակիցների բեյջերը: Մուտքի-ելքի ընթացակարգը ապահովող աշխատակիցների թիմը պետք է բաղկացած լինի 20 հոգուց-անձնակազմից:	1	դրամ	5.000.000	5.000.000
26		Հյուրընկալության ծառայություն	Հյուրընկալության ծառայությունը պատասխանատու է միջոցառմանը հրավիրված բոլոր բարձրակարգ հյուրերին և բանախոսներին օդանավակայանում դիմավորելու, տարածք և հյուրանոցներ ուղեկցելու և ճանապարհելու համար՝ Բացառությամբ հյորանոցային ծախսերի:	1	դրամ	3.000.000	3.000.000
27		Տպագրություն (բանեռներ,	Միջոցառման համար անհրաժեշտ տարբեր տեսակի տպագրություններ: Առնվազն 1.000	1	դրամ	8.000.000	8.000.000

		դրոշներ և այլն)	հատ Welcome kit-եր, 1000 հատ նոթատետրեր, 1000 հատ ուղեցույցներ, 1000 հատ քարտեզներ, առնվազն 100 մեծ դրոշներ և այլն:				
28		Վիդեո և ֆոտո նկարահանում	Միջոցառման ամբողջ ընթացքը պետք է նկարահանվի և տեսաձայնագրվի: Նկարահանված նյութերից հենց միջոցառման ընթացքում պետք է պատրաստվեն և հրապարակվեն տարաբնույթ տեսանյութեր և նկարներ:	1	դրամ	15.000.000	15.000.000
29		Միջոցառման հիմնական մասնակիցների համար համազգեստի պատրաստում	Միջոցառման հիմնական մասնակիցների համար պետք է պատրաստվեն 1000 հատ հատուկ բրենդային շապիկներ, 1000 հատ գլխարկներ և 1000 հատ հուդիներ, որոնք որպես հուշանվեր տրվում են մասնակիցներին:	1	դրամ	15.000.000	15.000.000
30		Ծովափնյա ատրակցիոնների և այլ ժամանցային ծրագրերի ապահովում	Ժամանցը պետք հանդիսանա միջոցառման կարևոր բաղադրիչներից մեկը: Պետք է առկա լինեն մոտորանավակներ, նավեր,ջրային այլ ատրակցիոններ, ուղղաթիթներ, ինքնաթիռներ, օդապարիկներ, աերոշուտներ: Երեկոյան ժամերին պետք է կազմակերպվեն կամ մեծ համերգներ, կամ ավելի փոքր տեղային ժամանցային ծրագրեր:	1	դրամ	6.000.000	6.000.000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
Ք. Երևան, Վ. Սարգսյան 3/3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039444
ՀՎՀՀ 02565518

Գլխավոր քարտուղար՝
Դ.Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Ստարտափ Արմենիա Գիտակրթակա»ն Հիմնադրամ
Ք. Երևան 0051, Արաբկիր 21, 10շ., բն. 8
Հ/Հ 2050022543291003
ՀՎՀՀ 00152409
Տնօրեն՝
Ա. Հարությունյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« » ապրիլի 2025թ. կնքված
ԲՏԱՆ-ՄԱՀՁԲ-2025/13 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79951100/5	«Սևան Ստարտափ Սամմիթ 2025» միջոցառման ծառայություններ				200,000,000	200,000,000	200,000,000	200,000,000	200,000,000	200,000,000	200,000,000	200,000,000	200,000,000	200,000,000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
Ք. Երևան, Վ. Սարգսյան 3/3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039444
ՀՎՀՀ 02565518

Գլխավոր քարտուղար՝
Դ.Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Ստարտափ Արմենիա Գիտակրթական»ն Հիմնադրամ
Ք. Երևան 0051, Արաբկիր 21, 10շ., բն. 8
Հ/Հ 2050022543291003
ՀՎՀՀ 00152409
Տնօրեն՝
Ա. Հարությունյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն